

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՆԱ-ԳՀԾԶԲ-21/07-4**

ք. Երևան

« 02 » փետրվար. 2021թ.

Հանրապետության նախագահի աշխատակազմը, ի դեմս աշխատակազմի ղեկավարի տեղակալ Խ. Պողոսյանի, որը գործում է Հանրապետության նախագահի աշխատակազմի կանոնադրության և Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավարի 20.01.2021թ.-ի Հ-12-Լ հրամանի հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Գարանտերվիս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Մ. Նիկողոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

1


3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է ոչ ավել, քան 800000 (ութե հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ $V = U / (1 + X \cdot T)$, որտեղ՝

V-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է:

U-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է:

X-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է:

T-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է:

P-ն մատուցված ծառայության քանակն է:

Պայմանագրի N 1 հավելվածի գնացուցակում նշված են U/V-X*T բանաձևով հաշվարկված գները:

2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ,

որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուց հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 22 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Բ Ա Տ ՈՒ

Հանրապետության նախագահի աշխատակազմ

ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 26/1

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Հ/Հ 900011204089

ՀՎՀՀ 00006505



Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Գարանտսերվիս» ՍՊԸ

ք. Երևան, Թբիլիսյան խճ 20

«Կոնվերսանկ» ՓԲԸ

Հ/Հ 193004674290

ՀՎՀՀ 00840437



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

«Ղ դրամ

Ծառայության							մատուցման	
Չափա- բաժնի համարը	միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	Ժամկետը	
5	50111130/505	Հյունդաի Էլանտրա 2.0 (2009թ.) HYUNDAI Elantra 2.0 ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ՝ համաձայն ստորև ներկայացված առանձին տեսակի ծառայությունների և դրանց գների:	դրամ	400000	1	Ք.Երևան, Կատարողի տեխնիկական սպասարկման կայանում	Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրվանից մինչև 2021 թվականի դեկտեմբերի 25-ը:	
8	50111130/508	Հյունդաի Էլանտրա 1.8 (2011թ.) HYUNDAI Elantra ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ՝ համաձայն ստորև ներկայացված առանձին տեսակի ծառայությունների և դրանց գների:	դրամ	400000	1			

ԳՆԱՑՈՒՑԱԿ

Հ/Հ	Ընթացիկ, միջին և հիմնական նորոգման աշխատանքների անվանումները	Տրանսպորտային միջոցների մականիշները/տեսակները/ և նույնացման համարները՝ ըստ չափաբաժինների	
		5-րդ չափաբաժին	8-րդ չափաբաժին
		Հյունդաի Էլանտրա 2.0 (2009թ.) HYUNDAI Elantra 2.0	Հյունդաի Էլանտրա 1.8 (2011թ.) HYUNDAI Elantra
		KMHDH41EBCU370108	KMHDU41DBAU854479
1	2	3	4
		Մեկ միավորի համար նախատեսված առավելագույն գներ -գնացուցակ /ՀՀ դրամ/	
1	Բոնկման համակարգի ստուգում	1191.635	1145.716
2	Կցորդման համակարգի ստուգում	1191.635	1145.716
3	Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում	1191.635	1145.716
4	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	1191.635	1145.716
5	Արգելակման համակարգի աշխատանքի ստուգում	1191.635	1145.716
6	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	1191.635	1145.716
	1.Շարժիչ		
7	Շարժիչի հանում և տեղադրում	39721.16	38190.53
8	Շարժիչի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	146968.3	141305
9	Շարժիչի գլխիկի հանում տեղադրում միջադիրի փոխարինումով	31776.93	30552.43
10	Շարժիչի գլխիկի նորոգում, եռակցում հղկումով	23832.69	22914.32
11	Շարժիչի գլխիկի փականի փոխարինում հղկումով և խտաբուկերով	7149.808	6874.296
12	Վառոցքի մոմի բնիկի նորոգում	2383.269	2291.432
13	Շարժիչի փականների զսպանակների փոխարինում	2383.269	2291.432
14	Փականների խցուկների փոխարինում	2383.269	2291.432
15	Հրիչների կամ հիդրոհրիչների փոխարինում 1 կ-տ	2383.269	2291.432
16	Շարժիչի մխոցաօղերի, հիմնական և շարժաթևի ներդրակների փոխարինում	73086.93	68742.96
17	Ծնկաձև լիսեռի հանում տեղադրում կամ փոխարինում	35749.04	34371.48
19	Ծնկաձև լիսեռի ատամնանիվի փոխարինում	7944.231	7638.107
20	Ծնկաձև լիսեռի ուղղում	7944.231	7638.107
21	Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոխարինում	11916.35	11457.16
22	Ծնկաձև լիսեռի հետևի խցուկի փոխարինում	11916.35	11457.16
23	Շարժիչի գլանի փոխարինում (гилзовка)	19860.58	19095.27
24	Բաշխիչ լիսեռի ականոցների հանում և տեղադրում կամ փոխարինում	7944.231	7638.107
25	Բաշխիչ լիսեռի խտաբուկի փոխարինում	11916.35	11457.16
26	Փոկանիվի փոխարինում	7944.231	7638.107
28	Շարժիչի շղթայի փոխարինում	71498.08	68742.96
29	Շարժիչի քարտերի նորոգում (եռակցում)	15888.46	15276.21
30	Շարժիչի քարտերի հանում, տեղադրում մաքրումով	11916.35	11457.16
31	Շարժիչի յուղի մղիչի փոխարինում	4766.539	4582.864
32	Շարժիչի յուղի մղիչի մաքրում	794.4231	763.8107
33	Շարժիչի յուղի ռադիատորի փողրակի փոխարինում	9533.078	9165.728

34	Յուղի ծորակի փոխարինում	1588.846	1527.621
35	Օդաքաշակ փողրակի փոխարինում	3177.693	3055.243
37	Թափանիվի հանում և տեղադրում կամ փոխարինում	3972.116	3819.053
38	Շարժիչի կափույրի փոխարինում	19860.58	17567.64
39	Շարժիչի կափույրի միջադիրի փոխարինում	19860.58	17567.64
40	Շարժիչի շարժաթևի փոխարինում 1 հատ	11121.92	10693.35
42	Ատամնանիվի փոխարինում	794.4231	763.8107
43	Սուխարիկ փոխարինում 1կ/տ	794.4231	763.8107
44	Շարժիչի հանդարտիչի փոխարինում	17477.31	16803.83
45	Շարժիչի փոկի հողովակի փոխարինում	11916.35	11457.16
46	Շարժիչի հողովակի առանցքակալի փոխարինում	9533.078	9165.728
47	Շարժիչի առջևի կափարիչի փոխարինում, հանում, տեղադրում միջադիրի փոխարինումով	12710.77	12220.97
48	Շարժիչի փոկի ձգիչի փոխարինում	12710.77	10693.35
49	Գլխիկի հեղույսի փոխարինում	2780.481	2673.337
50	Ծնկաձև լիսեռի հեղույսի փոխարինում	1191.635	1145.716
51	Շարժիչի էլեկտրական համակարգի հանում տեղադրում	19860.58	19095.27
52	Շարժիչի վառելիքի սնման համակարգի հանում տեղադրում	15888.46	15276.21
53	Շարժիչի քիմիական լվացում 1 կտորը	3177.693	3055.243
54	Կափույրի բնիկի նորոգում /գնեզդո/	1588.846	1527.621
2.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ			
55	Յուղի և յուղի զտիչի փոխարինում	1191.635	1145.716
57	Համակարգչային ախտորոշում	3972.116	3819.053
58	Յուղի ռադիատորի փոխարինում	7944.231	7638.107
59	Յուղի ռադիատորի նորոգում	794.4231	763.8107
60	Շարժիչի կոլեկտորի փոխարինում	7944.231	7638.107
61	Շարժիչի կոլեկտորի միջադիրի փոխարինում	7944.231	7638.107
62	Վառոցքի մոմի փոխարինում 1 հատ	397.2116	381.9053
63	Վառելիքի նուրբ մաքրման զտիչի փոխարինում	7944.231	7638.107
64	Օդի զտիչի փոխարինում	794.4231	763.8107
65	Օդի ծախսաչափիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	1588.846	1527.621
66	Օդի ծախսաչափիչի ռետինե խողովակի հանում և տեղադրում կամ փոխարինում	794.4231	763.8107
67	Օդի զտիչի փողրակի հանում և տեղադրում	7944.231	7638.107
68	Ինժեկտորի բոցամուղերի փոխարինում	11121.92	10693.35
69	Ինժեկտորի բոցամուղերի մաքրում	17477.31	16803.83
70	Բոցամուղի կողավորում	794.4231	763.8107
71	Ինժեկտորի բոցամուղի խտաբուկերի փոխարինում	794.4231	763.8107
72	Բենզամուղիչի փոխարինում	9533.078	9165.728
74	Վառելանյութի խողովակի հանում և տեղադրում կամ փոխարինում	1588.846	1527.621
76	Ղեկավարման բլոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	6355.385	6110.485
77	Ղեկավարման բլոկի վերանորոգում	15888.46	15276.21
78	Վառելիքի բաքի հանում և տեղադրում կամ փոխարինում	15888.46	15276.21
79	Վառելիքի բաքի մաքրում	2383.269	2291.432
80	Օդի ծախսի տվիչի փոխարինում	13505.19	12984.78
81	Ջրի ցերմաստիճանի տվիչի փոխարինում	11916.35	11457.16

82	Ջրի խողովակի, փողրակի փոխարինում	7944.231	7638.107
83	Բենզոբաքի բենզոմոնիչի ցանցի փոխարինում	3972.116	3819.053
84	Բենզոբաքի բենզոմոնիչի ցանցի մաքրում	3972.116	3819.053
85	Յուղի ճնշման տվիչի փոխարինում	9533.078	9165.728
86	Տվիչի փոխարինում	7944.231	7638.107
87	Ակսիլատորի փոխարինում կամ նորոգում	3972.116	3819.053
88	Օդազտիչի իրանի փոխարինում	1588.846	1527.621
89	Էլ.բենզոմոնիչի կախոցի փոխարինում	794.4231	763.8107
3. Սառեցման և արտաձման համակարգ			
90	Հովհարի փոխարինում	17477.31	16803.83
91	Հովհարի փոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	9533.078	9165.728
92	Ռադիատորի հանում և տեղադրում կամ փոխարինում	15888.46	15276.21
93	Ռադիատորի նորոգում	31776.93	30552.43
96	Ընդարձակող բաքի փոխարինում	1588.846	1527.621
97	Ընդարձակող բաքի փողրակի փոխարինում	1588.846	1527.621
98	Ջրի ծորակի փոխարինում	3177.693	3055.243
99	Հովացման համակարգի ռետինե փողրակի փոխարինում	1588.846	1527.621
100	Հովհարի շարժիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	3972.116	3819.053
101	Վառարանի ռադիատորի փոխարինում, բոլոր աշխատանքները ընդգրկված	55609.62	53466.75
102	Վառարանի ռադիատորի նորոգում	794.4231	763.8107
103	Վառարանի շարժիչի փոխարինում	11916.35	11457.16
104	Ջեռուցիչի էլ.ծորակի փոխարինում	4766.539	4582.864
105	Ջեռուցիչի իրանի փոխարինում	3972.116	3819.053
106	Թերմոստատի փոխարինում	9533.078	9165.728
107	Ջրի մղիչի փոխարինում միջադիրով	12710.77	12984.78
108	Ջրի մղիչի միջադիրի փոխարինում	12710.77	12220.97
109	Գեներատորի փոկի փոխարինում	3177.693	3055.243
110	Գեներատորի փոկի ձգող հղովակի փոխարինում	4766.539	4582.864
111	Ջրի ռադիատորի վերանորոգում	31776.93	30552.43
112	Թերմոստատի միջադիրի փոխարինում	11121.92	10693.35
114	Խլարարի 1 հատ խողովակի փոխարինում	7944.231	7638.107
115	Խլարարի անուրի (xamyr) փոխարինում	1191.635	1145.716
116	Խլարարի ներդիրի փոխարինում	3177.693	3055.243
117	Խլարարի կախոցի փոխարինում	3972.116	3819.053
118	Հովացման հեղուկի փոխարինում	4766.539	4582.864
119	Դիֆուզորի փոխարինում	4766.539	4582.864
120	Կոնդիցիոների լիցքավորում	7944.231	7638.107
122	Կոնդիցիոների կոմպրեսորի հանում և տեղադրում	12710.77	12220.97
123	Կոնդիցիոների ռադիատորի փողրակի հանում և տեղադրում	4766.539	4582.864
124	Կոնդիցիոների առանցքակալի հանում և տեղադրում	4766.539	4582.864
125	Կոնդիցիոների ռադիատորի հանում և տեղադրում	15888.46	15276.21
126	Կոնդիցիոների կալունակի հանում և տեղադրում	6355.385	6110.485
4. Փոխանցման տուփ			
127	Փոխանցման տուփի յուղի զտիչի փոխարինում	11121.92	10693.35
128	Փոխանցման տուփի յուղի փոխարինում	14299.62	13748.59
6. Առջևի և հետևի կամրջակներ			

158	Առջևի կիսասունիները միացնող հանգույցի փոխարինում	15888.46	15276.21
7. Կախոց			
159	Ձախ կամ աջ հողակապի հանում և տեղադրում կամ փոխարինում	10327.5	9929.538
160	Առջևի անվակունդի առանցքակալի փոխարինում	11916.35	11457.16
161	Առջևի անվակունդի հանում և տեղադրում կամ փոխարինում	14299.62	13748.59
162	Հետևի անվակունդի հանում և տեղադրում կամ փոխարինում	14299.62	13748.59
163	Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում	14299.62	13748.59
164	Անվակունդի գամասեղի և հեղուսի փոխարինում (մեկ անիվի համար)	5958.174	5728.58
165	Ձախ կամ աջ հողակապի խտաբուկերի փոխարինում	3574.904	3437.148
166	Ձախ կամ աջ հողակապի նորոգում	11916.35	11457.16
167	Ձախ կամ աջ հողակապի փոշեթիկնոցի փոխարինում	9533.078	9165.728
168	Ցնցամեղմիչի թասակի փոխարինում	11916.35	11457.16
169	Առջևի զսպանակի փոխարինում	11121.92	10693.35
170	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	11121.92	10693.35
171	Հարվածամեղմիչի վռանների փոխարինում	3972.116	3819.053
172	Մեղմիչի ամրացման կալունակի փոխարինում	6355.385	6110.485
173	Մեղմիչի երկաթե համաձուլվածքով վռանի փոխարինում	6355.385	6110.485
174	Ներքևի լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	11916.35	11457.16
175	Ներքևի լծակի վռանների փոխարինում 1 հատ	5163.75	4964.769
176	Ներքևի լծակի հեղուսի փոխարինում	3574.904	3437.148
177	Հարվածիչի (բարձիկի) փոխարինում	11916.35	11457.16
178	Գնդե հողակապերի պատյանի փոխարինում	6355.385	6110.485
179	Գնդե հողակապերի փոխարինում	6355.385	6110.485
180	Կայունարարի հանում և տեղադրում կամ փոխարինում	7944.231	7638.107
181	Առջևի կայունարարի վռանների փոխարինում	4766.539	4582.864
182	Հետևի կախոցի անվաբացքի կարգավորում	6355.385	6110.485
183	Հետևի կայունարարի վռանների փոխարինում	794.4231	763.8107
184	Կայունարարի կալունակի փոխարինում	4766.539	4582.864
185	Հետևի զսպանակների փոխարինում	11121.92	10693.35
186	Հետևի ձգածողի հանում և տեղադրում կամ փոխարինում	7944.231	7638.107
187	Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	3177.693	3055.243
188	Հետևի ցնցամեղմիչի փոխարինում	11916.35	11457.16
189	Անկյունագծային լծակի վռանների փոխարինում 1 հատ	3574.904	3437.148
190	Անվակունդի դարձովի կանգնակի փոխարինում	6752.597	6492.391
191	Աջ կամ ձախ դարձկեն լծակի փոխարինում	6752.597	6492.391
8. Ղեկային մեխանիզմ			
192	Ղեկասյունակի հիմնական նորոգում,	59581.74	57285.8
193	Ղեկային կալունի ձգանների փոխարինում	7944.231	7638.107
194	Ղեկային կալունի միջին ձգանի փոխարինում	3972.116	3819.053

195	ՂԿ-ի հողակապերի հանում և տեղադրում կամ փոխարինում	9533.078	9165.728
196	Հիդրոուժեղարարի մղիչի փոխարինում	6355.385	6110.485
197	Հիդրոուժեղարարի մղիչի հիմնական նորոգում, ներառյալ աշխատանքները	15888.46	15276.21
198	Հիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	5958.174	5728.58
199	Հիդրոուժեղարարի բարձր ճնշման խողովակի փոխարինում	11121.92	10693.35
200	Հիդրոուժեղարարի ցածր ճնշման խողովակի փոխարինում	11121.92	10693.35
201	Ղեկային ձգաձողի հանում և տեղադրում կամ փոխարինում	6355.385	6110.485
202	Ղեկային ձողի գնդե հողակապի նորոգում	3972.116	3819.053
203	Ղեկային ձգաձողի ձգանների հանում և տեղադրում կամ փոխարինում	7944.231	7638.107
204	Ղեկի հանում տեղադրում կամ փոխարինում	2383.269	2291.432
205	Ղեկային ձգաձողի ծայրակայների փոխարինում	3574.904	3437.148
206	Հիդրոուժեղարարի համակարգի յուղի փոխարինում	6752.597	6492.391
207	ՂԿ ձողի տեղաշարժի մեխանիզմի փոխարինում	5163.75	4964.769
208	Հիդրոուժեղարարի յուղի տարայի փոխարինում	3177.693	3055.243
9. Արգելակային համակարգ			
209	Վակումային ուժեղարարի փոխարինում	25421.54	24441.94
210	Վակումային ուժեղարարի փականի փոխարինում	4766.539	4582.864
211	Գլխ. գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում	11121.92	10693.35
212	Գլխ. գլանի հիմնական նորոգում, բոլոր աշխատանքների ընդգրկումով	10327.5	9929.538
213	Աշխատանքային գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում	9533.078	9165.728
214	Աշխատանքային գլանի հիմնական նորոգում,	6355.385	6110.485
215	Առջևի սուպպորտի հանում և տեղադրում կամ փոխարինում	9533.078	9165.728
216	Հետևի սուպպորտի հանում և տեղադրում կամ փոխարինում	9533.078	9165.728
217	Առջևի սուպպորտի վերանորոգում	9533.078	9165.728
218	Հետևի սուպպորտի վերանորոգում	9533.078	9165.728
219	Արգելակի վթարային արգելահանման լծակի փոխարինում	10327.5	9929.538
220	Արգելակի վթարային արգելահանման լծակի նորոգում	10327.5	9929.538
221	Արգելակային փողրակի փոխարինում	7944.231	7638.107
222	Արգելակային կոճղակների փոխարինում	4766.539	4582.864
223	Արգելակային համակարգի օդահանում	4766.539	4582.864
